

Այն ինչ որ կը քամուի ժանգն է,  
ապակիներով ոռոգուած անդունդ:  
Վերջնական փոսն է  
որ կը հմայէ,  
այն ինչ որ Մեզի շքերթով կը հրէ:  
Մի՛ կարծեր որ ցօղն է  
որ կը մեղմացնէ անթեղները:  
Անկեղծ Ենթարկումը,  
հաւարարիմ սնունդն է ողջախոհերուն,  
մեկնումի դաժանութեան մէջ տառապանքներ:



Չափանիշեր ենք,  
ուղղահայեաց գիծեր  
անհունին՝ որ չի գար:  
Խոստումս լքուած փապանագիր մըն է,  
քարերու ճեղքերուն միջեւ բուսնող մամուռ:  
Մինչ անսպառ առեղծուածը կը հաւասարեցնէ մեզ:  
Դիօշերը կը չորցնեմ  
արեւուն փակ սփռելով:  
Բոլոր ծարաւդ  
կոկորդիս համրութեան մէջ  
կը խոստովանի թէ չգիչեցի  
արեանս ուժին:  
Եւ ներկայիս որ քեզ ապահով վայր մը չեմ դրած  
յագեցուածներու յամառութեամբ:



Օրը երկար գիշեր մըն է:

Մերկ կրնակս

ի գուր կը սպասէ արեւուն

որպէսզի սաւաններս թօթուեմ:

Մարմինս անկողնին մէջ

կը փապըլփկի,

կը խայտայ

ձանձրոյթին ասպարեզ կարդալով:

Երբ կը չգանան ժամերս՝

նենգութիւնը կ'արիւնի

Բառերս կ'այրին:



Ծակոփկուած է այս պատը:

Միայն անոր ճեղքերուն միջեւ

բոյսը կ'աճի:

Եւ այս փոքր, յամառ տարածքներուն ընդմէջէն

դիմակները կը սահին,

կը սնանի ողորմութիւնը:

Պիտի չկտրեն հեծեծողներուն ուրքերը:

Դաւադրութեան նմանող այս ցօղը

պիտի վերածուի կաթիլ առ կաթիլ

հնչուող բառերէ կազմուած գլխազարդի մը:



Տ ունը պարպել:

Մարմնին սպասումը խանքարել

օտար ձեռքերու մէջ:

Եւ արկըն բանալ կիսով,

Տրոփող եզրերը թաքցնելով:

Ու տարուբերիլ,

ժայռէն, հախճապակիէն դուրս ելլել,

հիւանդութեան մէջ իյնալ, որ մեզ կը վերածէ

այն ցնցոյթիին որ պահարաններուն մէջ կը կծկուի:

Ուրեմն ի գուր պիտի խայթէ

սահմանագիծը ուր կը պարտմ:

Տկար քաջութիւն ժառանգած պիտի ըլլամ,

մեռեալի անգօր ընդդիմութիւն մը

նկարողութեան չառնուած սենեակներու մէջ:

## Յաւիտեան

Մեր բառերը պիտի արիւնին

ամայի գիւղերու պարիսպներուն մէջ:

Մինչեւ յաւիտենականութիւն

պիտի բաբախենք ցասկոտ

մարմնոյն հորիզոններուն վրայ:

Աքսորական եղբայրներ

անապատներուն մէջէն թափառող վաչկաբուններ:

Անհեթեթ պատուհասէն անհաւասարօրէն յուզուած,

թաւալած մինչեւ յաւիտենականութիւն

Տարփական անբարոյականութեան թարմութեան մէջ:

Մահուան նախադիւնքներու խնդութեան մէջ.

փճացնելով փարագները կը փճացնենք կեանքը

ուր ամուլ պիտի ըլլայ մինչեւ յաւիտենականութիւնը

մենք մեզի հանդարտեցնել փորձելով:

Ու երեւակայածին ամպիովանիին տակ համբոյրների

մոռնալու խոստումն են

այս աննահանջ առանձնութեան

որ անդարմանալիօրէն չի նահանջեր:

Մեր ձեռքի մը

տըճել մատներուն նման,

գալարուած երկաթացօղերը

ցոյց կու տան տիրապետութիւնը

անշքացող երեւոյթներուն:

Այնքան բարձր և այնքան առանձինն,

այնքան անպէտքէն մերկ,

փլատակի վերածուած սենեակներուս

անշարժ գերաններուն նման

առաստաղի երկաթները ոչ մէկ բանի կը ծառայեն

փլչած սենեակներուս:

Գ

ոհաբանական աղօթք մը

աղօթք մը որ կը հանդարտեցնէ

դանդաղ կորովներ, որոնք կը հեշտացնեն:

Միամտութիւնս անհուն պիտի ըլլայ

երբ մարմինդ անոր հայի,

եւ այդ գոյութենէն ոչինչ պիտի մնայ:

Անփոյթ գեղեցկութիւնը

փշաթելերը հաճելի կ'ընէ

ցամքեցնելով յորդարատ ջուրերը:

Աբբահայրերը, բանադրուած

աբբահայրերը հեշտանքին ի տես կը ճջան

իրենց զլացուած սիրոյ եզրին:

Մեր անպաշտպան ըլլալը առանձնութիւնը

կը քաւէ:





Տ ու՛նը վայր Մըն է

ուր մարդիկ կը քնանան,

ուր աղտոտ պնակները կը կուտակուին:

Բան մը որ գտնուեցաւ

սեղանի սփռոցներու բիծերուն մէջ:

Մնացորդներ խաշած միսի

սաւաններուն կարկտաններուն նման:

Աղտոտ լաթը կը դիզուի սակառներուն մէջ:

Կը գումարուին, կը հաւաքուին, կը սեղմուին

երազած տանս մէջ

ձեռքդ բառեր կը գրեն

իմ վիրաւոր գառիթափին վրայ:

.....

Ը նդհանուր համակարգիչը,  
տիեզերական մեծ պահարանը  
մեր յիշողութիւնը կը բնաջնջէ,  
եւ անոր ամենուրեքութիւնը.  
անոր դառնացած գիճութեան մէջ  
կը մոռնայ, շնչաիտէճ կ'ընէ մեզ  
նոր ելբայրակցութեան մը զուարթ կերպարին տակ...